

## Ի Բ Ա Խ Ո Ւ Ն Ք Ե Կ Ր Օ Ն

Ինչպէս յայտնի է, իրաւունքը միակ գործոնն է, որ կարգաւորում է հասարակական փոխագարձ յարաբերութիւնները. դա միակ գործոնն է, որ մարդկային հանրակեցութեան մէջ ծագող թէ անհատական և թէ խմբակցական շահերի բազմումը մեզմացնում է և իր նորմերով որոշ սահմանների է բաժանում՝, որոշ շրջանակների մէջ է գնում այդ շահերի փոխագարձ յարաբերութիւնները. Մակայն մարդկային զարգացման առաջին աստիճաններում հասարակական փոխագարձ յարաբերութիւնների կարգաւորող նորմերը կրել են միանդամայն այլ բնաւորութիւն. Աստուածային կամքի գաղափարը, չնորհիւ աստուածպետական հզօր տիրապետութեանը, եղել է միակ գործոնը, որ իր անյաղթելի ազդեցութիւնը տարածել է մարդուս ամբողջ աշխարհայեացքի, նրա բոլոր կենսական կողմերի վրայ. Հասարակական կեանքի կարգաւորութիւնը հիմնում էր կրօնով, ուր աստուածային կամքը համարւում էր իրաւունքի, օրէնքների միակ աղբիւրը. մի կամք, որը ժողովրդի հաւատի համաձայն արտայայտում էր կամ անմիջապէս և կամ հոգեւոր դասի ներկայացուցիչների միջոցաւ. Մենք տեսնում ենք, թէ ինչպէս ամբողջ երրայական իրաւունքը տոգորուած է ահեղ ու անողոք Եհովայի ոգով. Եհովայի, որի անունից էին իսոսում մարդարէնները և որի անունից էին սրանք օրէնքներ սահմանում իսրայէլ ժողովրդի համար. Մովսէս մարդարէի տասը պատգամները, հրէական իրաւունքի այդ հիմնական օրէնքները, Աստուածանից տրուած, Եհովայից բղխած էին համարւում իսրայէլ ժողովրդի աշխարհայեացքի մէջ, կանոնական իրաւունքը, հիմնուած լինելով քրիստոնէական սկզբունքների վրայ, իր զարգացման սկզբնական աստիճաններում, տակտուին այն ժամանակները, երբ քրիստոնէական համայնքները չէին հետապնդում քաղաքական իդէալներ, երբ եկեղեցիները չէին ընկած

պետական-քաղաքական գերիշխանութեան սկզբանքների յետեից, ահա այդ կանոնական իրաւունքը իրեն ազբիւր ունէր միայն առաքեալների սահմանած կանոնները \*։ Այդ առաքելական կանոնները բզիսում էին Քրիստոսի քարոզած մաքերից ու խրաժներից, ուրեմն տօգորուած էին աստուածային-կրօնական ոգով։ Հաղա Դուրանը, մուսուլմանների իրաւաբանական կարգերի ու նորմերի այդ ժաղաժածուն, որ կազմել է Մահմետը իր հաւատացեալների համար, արդեօք նոյն աստուածային բնաւոյութիւնը չի կրում իր մէջ։ Մահմետական աշխարհը, որ մինչև օրս այնպէս հաւատարիմ ու անյոդոզդ հետեւմ է իր մեծ մարգարէի սահմանած կանոններին ու օրէնքներին, չե՛ որ այդ բոլորը համարում է Ալլահի կամք, հաւատում է իրեւ Ալլահից իր մեծ մարգարէի միջոցով ստացած կանոններ։

Նոյնն է հեթանոսական կրօնների աշխարհայեացքներում։ Ամբողջ հին հնդկական իրաւունքն արծարծուել է մի շարք կրօնական երգերում ու տաղերում, մարմնացել է սրբազան գլոբերի մէջ, որտեղ օրէնքներն ու իրաւաբանական կանոնները ընդունւում էին իրեւ աստուածային սահմանած հրամաններ, աստուածային կամքի արտայայտութիւններ։ Այդպէս են գօնէ Վիշնուի, Մանուի, Ապաստամբայի, Իազնավալքիյայի և այլն օրէնքները, որոնք Բուդդայի անձնաւորութեան էութիւնից են իրք թէ բըզախում, նրա աստուածային գերագոյն իշխանութեան գաղափարով են կարգաւորում մարդկային փոխադարձ յառաքերութիւնները։ Իսկ Զրադաշտական կրօնի վարդապետութեան բովից դուրս եկած Զէնդ-Ավեստան արդեօք իր իրաւաբանական նորմերով չի ներկայացնում։ Ումզդի հզօր կամքը, այն աստուածային սկզբունքը, որով զեկավարուել են հին պարսիկները իրենց առօրեայ սոցիալ-իրաւական յարաքերութիւնների մէջ։ Նոյնն էր հին լատինական-

\* Այդ կանոնները առաքելական ծագում չունին, ոմանք մինչեւ Գ. և Նոյն իսկ եւ դար են իջեցնում նրանց ծագման ժամանակը։

հռովմէական, հին հելլենական կեանքերում, ուր իրաւաբանական ու կրօնական աշխարհայեացըները միևնոյն աղքիւրի արգասիքներ էին համարւում, միևնոյն աստուածային սկզբունքի մարմնացումն էին ներկայացնում։

Կրօնի և իրաւունքի այդ անբաժանելի հասկացողութիւնը, հոմանիշ նշանակութեամբ ըմբռնումն իբրև աստուածային կամքի արտայայտութիւն մի բնորոշ, ընդհանրացած երեսոյթ է մարդկային կուլտուրական պատմութեան մէջ։ Մեզ շատ հեռուն կըտանէր, եթէ այստեղ փորձէինք մի առ մի թուել կամ աչքի ածել այն բոլոր բազմաթիւ փաստերը, որոնք ապացուցանում են զանազան ժողովուրդների մէջ գոյութիւն ունեցած աշխարհայեացըները կրօնի և իրաւունքի հոմանիշ նշանակութեան ու միասիւսակ ըմբռնման մասին։

Ինքնըստինքեան ակներեւ է, որ եթէ իրաւունքի այն նորմերը, որոնցով կարգաւորւում են հասարակութան փոխագարձ յարաբերութիւնները, աստուածային կամքից բղխուած էին ճանաչում և կրօնական գաղափարներով էին սրբագրծուում, այն ժամանակ այդ տեսակ իրաւունքի միակ պաշտպանողն ու գործադրողը, այդ տեսակ իրաւաբանական նորմերի միակ տեսանելի, բէտլ ստեղծագործողներն ու խմբագրողները կարող էին լինել միմիայն հոգեորականները, լինեն նրանք հեթանոսական, քրիստոնէական, լինեն նրանք մահմեդական կամ մովսիսական կրօնների, իրաւունքի զարգացման պատմութեան մէջ հանապազ նկատում ենք, թէ ինչպէս ամենուրեք հոգեոր գասի աղդեցութիւնը շեշտակի աչքի է ընկնում բոլոր իրաւական յարաբերութիւնների կարգաւորման մթնոլորդում, որոշ գոյն և բնոյթ ներշնչում իրաւաբանական աշխարհայեացըների ամրապնդուելուն։ Այդ աղդեցութիւնն իրականանում էր ոչ միայն տեսականորէն, այլ և գործնականորէն, թէև տարբեր և ուրոյն կերպով զանազան տեղերում։

Հին Հնդկաստանում քրիմերը՝ բրահմանները հանգէս էին գալիս գատաստանական ատեաններում թագա-

ւորների իրրե անպայման ու անհրաժեշտ դատաւորակիցներ՝ այդ քրմերի դատարանները շատ անդամ փախարինում էին թագաւորներին, որոնք ըստ հնդիկ իրաւունքի միակ իսկական դատաւորներն էին ճանաչվում։ Վաղեմի գերմանների մէջ քրմերը զեկավարում էին ժողովրդական ժողովները, ուր օրէնքներ ու իրաւական կարգեր էին մշակւում։ այդ քրմերը, որպէս վկայում է հոռվմէական պատմագիր Տակիտոոր, օժտուած էին քրէական ու պատմական իրաւունքի լիազօրութիւններով։ Հին Դալլիայում քրմերը, որոնք կոչվում էին ղըուիտներ, ահագին իրաւունքի տէր էին։ Նրանք, Յուլիոս Կեսարի ասելով, ամենալայն չափերով կատարում էին դատաւորական պարտականութիւններ, իրենց դատաստանի իրաւասութեանը ենթարկելով բոլոր քաղաքացիական ու քրէական երեսյթները։ Նրանք սահմանում էին օրէնքներ, դատավճիռներ ու իրաւաբանական որոշումներ յատուկ խորհրդաւոր ասացուածներով, որոնց ոյժ էին տալիս և սրբազնացնում զանազան կրօնական ծէսերով ու ողջակէզներով։ Նաև հին Հռոմեայում քրմերին էր վերապահուած իրաւաբանական երեսյթների ու օրէնքների մեկնարանութիւնը և բացատրութիւնը։ Պատմական փաստերի մէջ կարելի է նշմարել հետքեր, թէ քրմերը ինչ մեծ ազդեցութիւն են ունեցել այստեղ իրաւունքի զարգացման վրայ։ Տակաւին կիկէրոնի ժամանակները նրանք կարծիքներ էին արտայայտում իրաւական հարցերի դէպքերում և գլխաւոր քրմապետին՝ pontifex maximus-ին՝ համարում էին մարդկային ու աստուածային գործերի միջնորդ ու հաշտարար դատաւոր։

Փոքը Ասիայում բիւզանդական կայսրութեան հպատակ արևելեան ժողովրդների մէջ, ուրեմն ի միջի այլոց նաև Հայաստանում, նախնի քրիստոնեաներից աւանդուել էր մի հին սովորութիւն՝ այն է իրենց վէճերը, իրաւական գործերը լուծելու համար դիմել ոչ թէ աշխարհական, այլ հոգեւոր դատարաններին։ Եւ ահա բիւզանդական կայսրները մի շարք Novella-ներով այդ սովորութեանը

օրինական զօրութիւն են տալիս կոստանդին կայորը արևելքի բռլոր եպիսկոպոսներին տուեց գատավորութեան ու գատաստանական իրաւանութեան լիազօր իրաւունքներ, այսպէս անուանած աւդիունտիա արքական հաստատութեամբ։ Episcopalis audientia յի գաղափարը կայանում էր նրանում, որ գատով, բողոքով իրաքանչիւր կողմը իրաւունք ունէր հակառակորդ կողմին, նոյն իսկ վերջինիս կամքին հակառակ, գատաստանի քաշել եպիսկոպոսի առջև, որը այս դէպքում կատարում էր գատաւորի գերա Այսպէս անուանած Աիրմօնեղիական կօնստիտուցիաներաի առաջին գլխում այդ նիւթին վերաբերեալ հետեւալն ենք կարգում։ Quiquaque item habens—iudicium eligit sacrosanetae legis antistitis, illico etiamso alia pars refragatur, ad episcopum dirigatur\*).

Աւելի ևս հետաքրքրական է այն գերը, որ խաղացել է հոգեոր գասը արևելտեան եւրոպայում միջին գարերամ ընդհանրապէս իրաւունքի և մասնաւորապէս պատժական իրաւունքի զարգացման վերաբերմամբ։ Այն հիմնական սկզբունքները, որոնք ծառայում էին հոգեոր սպատժական իրաւունքին իրեն ելակետ, կայանում էին նրանում, որ սճագործութեան մէջ կարծում էին աեսնել մարդկային ներքին զգացողութեան արտայայտութիւնը, մարդու ներքին ընոյթից բղխած մի մեղանչանք դէպի աստուածային օրինականութիւնն։ Իրաւունքն իր սպատժական միջոցներով տիրապետող այդ սկզբունքների համաձայն պիտի մաքառէր մարդկային մեղագործութեան բալոր սաղմերի դէմ, պէտք է դուրս վանէր մարդու ներքին աշխարհից «չարութեան» արմատները և այնուեղ ընդհակառակն հաստատէր լիազաղութիւն, որպէս զի այդպիսով մարդու և Աստծու միջև իր հաշտութիւն առաջանան։ Այդ հիմունքները այնքան խորն էին արմատացել միջնադարեան իրաւագիտակցութեան մէջ, որ հո-

\* ) Haenel—Novellae Const. imperatorum Theodosii I etc. p. 445—446.

գիսր պատժական իրաւունքը դարերով շարունակ իշխում  
էր արևմտեան բովանդակ իրաւունքի մէջ, Եւ մենք տեսա-  
նում ենք, թէ ինչպէս միջնագարեան Անգլիայում՝ ու  
Ֆրանսիայում այդ հիմնական ոկղունքների ազգեցու-  
թեան ներքոյ եկեղեցական օրէնսդրութիւնը գրաւել էր  
հասարակական-պետական կեանքի բոլոր կողմերն և իր  
սահմանած նորմերով կարգաւորում էր քաղացիական  
իրաւական բոլոր երկոյթները:

Վերջապէս հայոց իրաւունքի պատմութեան մէջ նըշ  
մարում ենք նոյն փաստերը, Բաւական է լոկ աչքի անց-  
կացնել հայոց եկեղեցական ժողովների որոշումները, հայոց  
կանոնական իրաւունքի նորմերը, որպէս զի տեսնենք, թէ  
ինչ մեծ գեր էին խաղում հոգեորականները հայկական  
իրաւունքի գարգացման պատմութեան մէջ, թէ ինչ ոգի  
ու կնիք էին դրոշմել հայ ժողովրդի իրաւական յարաբե-  
րութիւնները կարգաւորող նորմերի վրայ Բաւական է լոկ  
շեշտել Մխիթար Գօշի Դատասնագրքի վրայ, ուր այնքան  
նախամեծար նշանակութիւն է տրում այսպէս անուա-  
նած «Հոգեոր» կամ «Եկեղեցական» դատաստանին Վերա-  
ջինիս ենթակայ էին նախ՝ այն բոլոր գործերը, որոնք  
վերաբերում են եկեղեցուն—«զեկեղեցւոյ դատաստան  
եպիսկոպոս հոգասցէ». և ապա՝ այն բոլոր գործերը նոյն  
իսկ աշխարհական, եթէ այդ տեղերութ չկան մարմնաւոր  
իշխանութեան ներկայացուցիչներ—«և ի տեղով, ուր ոչ  
իցեն թագաւոր կամ իշխանք, պարտ է յեպիսկոպոս տալ  
զայս յաւանդ, զի զամենայն դատաստանս հոգասցեն»\*):  
Բացի այդ՝ հայոց քաղաքական կեանքը, մանաւանդ մի-  
ջին դարերում, երբ հայերը իսպառ զրկուել էին սեփա-  
կան քաղաքական իշխանութիւնից, այնպէս էր կազմա-  
կերպուել, որ հոգեօրականութիւնը միակ ներգործական  
ներկայացուցիչն հանդիսացաւ ժողովրդի իրաւաբանական  
յարաբերութիւնների կարգաւորման մէջ, միակ զեկավար-

\* ) Դատաստանագիրք Մխիթ. Գօշի՝ հրատարակ. Վահան  
Տ. լ. Բաստամեանի. Եջմիածին: Նախագուռան, Եւ գլ. Եր. 26:

ներն էին դատաստանական ու վարչական հիմնարկութիւնների թիւններում։

Հոգևորականութեան՝ կրօնական հիմնարկութիւնների այդ սպասաւորների՝ այդ տեսակ ազդեցութիւնն իրաւունքի գարգացման վրայ միանդամայն բնական էր։

Հոգևորականները սկզբներում ունէին աւելի լայն հասարակական գործունէութեան ասպարէզ և անհամեմատ աւելի մեծ քաղաքական գեր էին խաղում ժողովրդների պատմութեան ընթացքում քան ներկայումս։ Հոգևոր դասի ներկայացուցիչները՝ լինէին նրանք նախնական քահանաները, քրմերը և այլն, վաղեմի ժամանակները յայտնի էին իբրև բժիշկներ, իրաւագէտներ, ասուզագէտներ և ընդհանրապէս գիտուններ, որոնք իրենց պարտականութիւններն էին համարում զբաղուել ոչ միայն նրանով, թէ ինչպէս կարգաւորել մարդկանց յարաբերութիւնները գէպի աստուածութիւններն, գէպի կրօնական-բարոյական հիմնարկութիւնները, այլ և ուսումնասիրում, գիտակցում և ըմբռնում էին մարդկանց յարաբերութիւնները թէ գէպի մարդիկ և թէ գէպի շրջապատող բնութիւնը։

Վերոյիշեալ բոլոր փաստերը ապացուցանում են մի հետաքրքիր երեսոյթ, որ իրաւունքի և կրօնի հասկացողութիւնները զարմանալի նմանութեամբ ամէն տեղ միացած, ձուլուած են եղել և կրկնեում են գրեթէ բոլոր ժողովրդների մտաւոր-կուլտուրական զարգացման պատմութեան էջերում։ Ինչո՞վ բացատրել ժողովրդական աշխարհայեցքներում տիրապետող այդ երկու հասկացողութիւնների միատեսակութիւնն, հոմանիշ նշանակութիւն ունենալու պատճառները։ Անշուշտ ամենուրեք հիմքը միևնոյնն է լինելու, եթէ մենք պատահում ենք այդ տեսակ մի ընդհանուր երեսոյթ, ընդհանրացած մի փաստ։ Այդ երեսոյթի գոյացման ընդհանուր հիմքը պիտի որոնել օջախի եւ նախահայրերի պաշտամունքի մէջ, մի պաշտամունքի, որը նոյնպէս տիեզերական ընդհանրական բնաւորութիւն ունի գրեթէ բոլոր ժողովրդների կուլտուրական պատմու-

թեան մէջ։ Երկար կանգ չենք առնում այստեղ նախահայրերի և օջախի պաշտամունքի նշանակութեան և հետազոտութեան վրայ, այլ բաւականանք շեշտելու, թէ ինչ գեր էր կատարում այդ պաշտամունքի մէջ տան մեծը, գերդաստանի նահապետը<sup>\*</sup>):

Ամբողջ նախնական կրօնը պարփակուած էր ընտանիքում։ Նրա օջախի շուրջը, տան մեծը, նահապետը միակ քուրմը, միակ հոգեոր պետն էր, որ վարում էր ընտանիքի բոլոր կրօնական արարողութիւններն ու ծէսերը, նախանձախնդիր էր ու անշեղ հոկում էր նախահայրերի կուլտն, օջախի պաշտամունքը, աստուածների երկրպագումն, նահապետը, իբրև իր ընտանեկան կրօնի միակ կատարողն ու մեկնաբանողը, ինքը միմիայն իրաւունք ունէր իր նախահայրերի կրօնական վարդապետութիւնը,— նախահայրերի, որոնք նրա կրօնական աշխարհայեացքում արդէն աստուածացրած էին,— աւանդելու և ուսուցանելու իր անմիջական ժառանգին, որը յետագայում պիտի բոնէր նրա տեղը։ Բայց և միւնյն ժամանակ գերդաստանի նահապետը, որպէս ցոյց են տալիս գիտական հետազոտութիւններն, օժտուած էր իր ընտանիքի սահմանաներում այնպիսի իրաւական դիրքով, իրաւաբանական հեղինակաւորութեամբ, որը նրան տալիս էր գերդաստանի միակ ներկայացուցչի նշանակութիւն բոլոր իրաւականսոցիալական յարաբերութիւնների և հասարակական հանրակեցութեան մէջ։ Նահապետի, տանուտէրի patria potestas-ը տարածւում էր գերդաստանի անդամների վերաբերմամբ ոչ միայն իր տան պատերի մէջ, այլ և այդ պատերից դուրս, պետական-հասարակական բովանդակ մթնոլորդում։ Նրա անձնաւորութեան մէջ միացած էին թէ դատաւորի և թէ օրէնսդրի, թէ զինուորական հրա-

<sup>\*</sup>) Օջախի և նախահայրերի կուլտի մասին մանրամասն կարելի է ծանօթանալ Խ. Սամուէլեանի ընդարձակ յօդուածից՝ «Հայ ընտանեկան պաշտամունքը»—Ազգագրական հանդէս գերք XІІ, XІІІ և XІV.

մանտառի և թէ խաղաղ գերդաստանի բացարձակ հրաշմայողի բոլոր իրաւունքները ընտանեկան կազմի ամբողջութեան վերաբերմամբ \*), Ուրեմն գերդաստանի նահապետի իրաւական դրութիւնը բնորոշւում է նրանով, որ նա միաժամանակ համարւում է թէ հոգեսոր և թէ աշխարհիկ տէր ընտանիքի, իր սերնդի, այսինքն միաժամանակ թէ քուրմ է, քահանայ է և թէ դատաւոր, օրէնտդիր է իր գերդաստանի, սերնդի սահմաններում:

Այսուեղ տրամաբանօրէն հետևում է, որ նախնական հասարակական փոխադարձ յարաբերութիւնները կարդաւորում էին այն իրաւաբանական նորմերով, որոնք գոյանում, մշակուում էին նահապետական գերդաստանի աշխարհայեացքներում, կռում, կոփուում էին այն կրօնական մթնոլորդում, որտեղ օջախի և նախահայրերի պաշտամունքը գարձել էր գերդաստանի գոյութեան ու ծաղկման հիմքը: Ընտանեկան կազմակերպութիւնը, ընտանեկան յարաբերութիւնները, լինելով իրաւաբանական իդէոլոգիայի սկզբնական հիմնաքարերը, գառնալով նախնական իրաւունքի գոյացման ու զարդացման առաջին աստիճաններից մէկը, ակների է, որ ամբողջովին պիտի մարմնացնէին, տոգորէին մշակուող իրաւաբանական նորմերի ոգին այն կրօնական աշխարհայեացքով, որոնցով զեկավարուում էին գերդաստանական կազմակերպութիւններն յանձին իրենց նահապետների ու իրենց տանուտէրերին եւ ապա, երբ յետագյում, այդ գերդաստանների, սերնդական կազմակերպութիւնների միջից ծնունդ առան և զարդացման պետական մարմիններ, պետական հիմնարկութիւններ, հասարակական փոխադարձ յարաբերութիւնները շարունակուում էին կարգաւորուել իրենց սկզբնական քայլերում նոյն իրաւաբանական նորմերով, որոնք տակաւին չէին թոթափել իրենց նախնի կրօնական-բարոյական աշխարհայեացքը: իրաւունքն ու կրօնը, կամ աւելի լաւ

\*) Prof. Leist, Graeco—Italische Rechtsgeschichte, Երես 121—126:

ասած իրաւունքն ու բարոյականութիւնը դեռ ևս կազմում էին մի հասկացողութիւն, մի ձուլուած դադավար, ըմբռնուում էին մի աշխարհայեցողութեամբ հասարակական փոխադարձ յարաբերութիւնների կարգաւորման վերաբերեալ:

Սակայն սոցիալ-կուլտուրական կեանքի դարգացմամբ դարերով ապրող նախնի բարքերն ու սովորութիւնները հասարակական նոր ազգակների շնորհիւ սկսում են դուրս գալ իրենց միակերպ գոյութիւնից և ենթարկեում են բաժանման պրօցեսին՝ գիֆերենցիացիօնի, մի հասկացողութիւնից տարրալուծում են երկու և այլ բազմաթիւ ինքնուրոյն հասկացողութիւններ, գաղափարներ։ Այսպիսով ժամանակի ընթացքում մարդկային միտքն ընդունակ եղաւ առանձին երեսյթները տարրալուծելու իրենց բազկացուցիչ մասերի և զտելով, անջատելով առանձին հասկացողութիւնները, տալ նրանց ինքնուրոյն, անկախ դրութիւն։

Մտաւոր դարգացման այդ պրօցեսում իրաւունքի ու կրօնի, կամ բարոյականութեան հասկացողութիւնները միմեանցից տարրալուծուեցին ու անջատուեցին, իրաւունքի և կրօնի այդ բաժանումն իրարից կատարւում էր շատ երկար ժամանակամիջոցում, մի ամբողջ պատմական շրջանում։ Սակայն այդ երկու անջատուած ըմբռնումների միջև տակաւին մնում էր մի առնչութիւն, փոխադարձ մրցում, որոյ շնորհիւ իրաւունքը, թէև բաժանուել, անջատուել էր կրօնական հասկացողութիւնից, այնուամենայնիւ կրում էր որոշ դուալիստական ձև։ Եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս հին հռովմէական և յունական իրաւունքները իրենց դարգացման ամբողջ պատմական շրջանում տողորուած էին դուալիստական սկզբունքներով, այն է՝ պարփակում էին մի կողմից՝ իրաւունքի մարդկային, գաղաքացիական և միւս կողմից՝ կրօնական, բարոյական տարրեր։ Իրաւունքի այդ դուալիզմը շատ բնորոշ դրոշմուել է հին յոյների և հռովմէացիների դիւցաբանութեան մէջ, որտեղից նրա հետքերը շարունակել են պահպանուել ու

փոխանցուել, ներմուծուել են նաև նրանց հին օրէնսդրական պատմութեան մէջ։ Հին հելլենական իրաւունքի պատմութեան մէջ այդ գուալիզմը արտայայտում էր մի կողմից թէսմօց, թէմու բառերով և թէմիտան, իբրև ճշմարտութեան ու արտայայտութեան աստուածուհին. միւս կողմից՝ նէչդ ու նօմօց բառերով—որ կընշանակէ աշխարհական օրէնք, իբրև մարդկային հասկացողութեան յառաջադրութիւններ։ Նմանապէս հին հռովմայեցիների իրաւունքի մէջ յիշեալ գուալիզմը ընորոշում էր երկու յայտնի խօսքերով՝ fas իբրև կրօնական, աստուածային օրէնք, և ius, իբրև աշխարհական, մարդկային իրաւունքի արտայայտութիւն։ Fas lex divina, ius lex humana est—ասում էին հին հռովմէացիները։

Մինչդեռ մտաւոր զարգացման պրօցեսը զգալի կերպով առաջ է գնացել Արև մուտքում, ուր տակաւին հին պատմական ժամանակները գտնում ենք վերոյիշեալ դիմերենցիացիոնի հետքերը, ինչպէս օրինակ հին Յունաստանում և Հռովմում, ընդհակառակն այլ պատկեր է ներկայացնում արևելքի մտաւոր զարգացման պատմութիւնը։ Այստեղ մարդկային մտածողութեան ու դիտողութեան սահմանները չկարողացան դուրս գալ իրենց անշարժութիւնից, և մենք նոյն իսկ մեր օրերում ականատես ենք, թէ ինչպէս արևելեան ժողովրդների մտաւոր զարգացումն տակաւին կախումն ունի կրօնական փիլիսոփայութեան գաղափարներից։ Այստեղ զուր կը լինէր որոնել հասարակական մտքի ու մտածողութեան դիմերենցիացիոնի նշոյլներ, ուրեմն և իրաւունքի ու կրօնի հասկացողութիւնների անջատում։

100